



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. ԱՇՈՏ Գ. ԱՐԻԱՆԱՄՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՄԵԶ

Կաթողիկոսական տեղապահ բարձրապատիվ Տ. Խաղարքեպիսկոպոս օգտվելով կաթողիկոսական ընտրության Ս. Էջմիածնի աշխարհական պատվիրակ, «Էջմիածին» պաշտոնաթերթի խմբագիր պրոֆ.-դոկտ. Աշոտ Գ. Աբրահամյանի ներկայությունն, հրավիրեց հարգելի հյուրը հանդես գալու Դպրեվանքի մեջ դասախոսական շարքով մը՝ հայ ժողովուրդի պատմության ու մատենագրության հարցերու շուրջ։ Պրոֆեսորը սիրահոգաբար հանձն առավ Տեղապահ սրբազան հոր առաջարկը և հունվարի 20-ին սկսյալ, հաջորդաբար, հինգշաբթի և շաբաթ երեկոներ, դասախոսեց Դպրեվանքի Կյուլլապի Կյուլպենյան սրահին մեջ՝ հետևյալ նյութերու շուրջ.

1. Հայագիտության զարգացումը Մայր Հայրենիքում (20 հունվար)։
2. Նախամեսրոպյան հայ նշանագրերի և հայ մատենագրության առեղծվածը (22 հունվար)։
3. 5-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացի (27 հունվար)։
4. Հայրենի երկրի հայագետների կարծիքը հայ ժողովրդի ծագման մասին (29 հունվար)։
5. Նոր տվյալներ հայ ազատագրական շարժումների մասին (3 փետրվար)։
6. Վերածննդի հարցը հայկական միջնադարում (5 փետրվար)։
7. Հովհաննես Սարկավազ իմաստասերի գիտական մատենագրությունը (10 փետրվար)։

Դասախոսություններուն ներկա գտնվեցավ մեծ բաղմություն մը՝ բաղկացած մտավոր-

րականների, ուսուցիչների, Արարական, Ֆրանսական և Ամերիկյան համալսարաններու հայ ուսանողների և Դպրեվանքի ու քաղաքի երկրորդական վարժարաններու ուսանողների։

Պրոֆեսորը, շնորհիվ իր հմտության, խոսելու ճարտարության ու գրավչության, փաստալից և արտասահմանի հայագետներու համար նորաբեր տվյալներուն, խոր տպավորություն ձգեց ներկաներուն վրա։ Մատենագրական նույնիսկ ամենեն չոր նյութերը ստացան կյանք ու հաղորդականություն։

Այս դասախոսությունց նպատակը ըլլալով մի՛այն օգտակար հանդիսանալ ընդհանրապես բելլուրթահայ մտավորականներուն և մասնավորաբար Դպրեվանքի ուսանողներուն՝ տեղյակ պահելու զանոնք Հայաստանի գիտնականներու տեսակետներուն, հայագիտական զանազան հարցերու մասին, դասախոս պրոֆեսորը զգուշացավ քաղաքական բնույթ կրող որևէ հարց շոշափելի։ Ներկայացուց ինչպես իր, նույնպես հայրենի երկրի գիտնականներու կարծիքը թանձրացյալ ձևով ու գիտական ճշգրտությամբ։

Բառացի կարենալ վերարտադրելու համար պրոֆեսորին դասախոսությունները, Դպրեվանքի ուսանողները ձայնագրած են զանոնք։ Մտավորականներու պահանջով ու Կաթողիկոսարանի նախաձեռնությամբ՝ վերոհիշյալ յոթը դասախոսությունները լույս պիտի տեսնեն կոկիկ հատորի մը մեջ մեր տպարանին։

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր
Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո,
Անթիլիաս, 1955 թ., փետրվար)

ՌԸՆԵ ԳՌՈՒՍԵՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հունվարի 14-ին (1955), փարիզահայտյոց կողմն սարքվեցավ երեկույթ մը, նվիրված՝ ֆրանսացի նշանավոր պատմագետ ու ակադեմիկոս Ռընե Գոուսեի, Մյուզե Կիմեր սրահին մեջ: Երեկույթին ներկա գտնվեցան ֆրանսացի ակադեմիկոս Ռընե Գոուսեի, Կնախագահներ գերապատիվ Տ. Սերովըն ծայրագույն վարդապետ Մանուկյան, որ ճառ մը կարդաց դրվատելով մեծ պատմագետին արժանիքն:

որ: Ֆրանսերեն լեզվով ճառեր կարդացին պարոն Հրանտ Թորոսյան, տիկին Արշալույս Խանտանյան ու պարոն Գրիգոր Պահրի, որոնք ներկայացուցին Գոուսեի կյանքն ու գործունեությունը և հայության մատուցած ծառայությունները:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1955 թ., փետրվար)

ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒՈՒՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ 47-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Վիեննայի հայոց Ս. Փրկիչ մատուան բացման 42-րդ սարեգարծը տոնվեցավ Հունվարի 23-ին (1955), հանդիսավոր կերպով, խուռն թաղմության մը ներկայության: Պատարագեց ու քարոզեց գերապատիվ Տ. Նղիշ ծայրագույն վարդապետ Յուսուբյան: Պատարագեն

ետք տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ՝ մատուան հիմնադիրներուն ու բարերարներու հիշատակին համար:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1955 թ., փետրվար)

Հ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ

Հունվարի 17-ին (1955) տեղի ունեցավ գերհարգելի Հ. Ներսես Ակինյանի «Փիլիսոփայության դոկտոր» տիտղոսի տվչության հանդեսը, վանատան հանդիսասրահին մեջ: Հանդեսին ներկա էին պրոֆեսորներ, եկեղեցականներ, կրթական նախարար դոկտ. Դրիմմել, հայ գաղութի անդամներն ու իրենց հոգևոր հովիվը՝ գերապատիվ Տ. Նղիշ ծայրագույն վարդապետ Յուսուբյան, ակադեմիականներ, ծերակույտի անդամներ ու Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրեր: Փիլիսոփայական համալսարանի տեսուչը՝ պրոֆ. դոկտ. Սվոբոդա իր խոսքը ուղղելով համալսարանի վերատեսուչ դոկտ. Դադոնին,

խնդրեց, որ գերհարգելի Հ. Ներսես Ակինյանի «Փիլիսոփայության դոկտոր» տիտղոսը շնորհել: Այն նախ հայտնեց իր ունեցած հիացումը հայ մշակույթին հանդեպ և ընդգծեց Հ. Ակինյանի բանասիրական բեղուն գործունեությունը, ապա իր ճառն ետք կարդաց լատիներեն գրված վկայագիրը և զայն հանձնեց գերհարգելի Հ. Ակինյանի, Ապա հորեկյարը հուզված շեշտով հայտնեց իր շնորհակալությունները:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1955 թ., փետրվար)

ԿԱՀԻՐԵՒ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ, փետրվարի 19-ին (1955), երեկույան ժամը 9-ին, Կահիրեի Ամերիկյան համալսարանի սրահին մեջ տեղի ունեցավ Գալուստյան ազգային վարժարանի հարյուրամյակի տոնակատարությունը: Ներկա էին նաև նրուսահեմի Պատրիարքական տեղապահ բարձրապատիվ Տ. Նղիշ արքեպիսկոպոս Տերտերյան ու հոգեշնորհ Տ. Շահն վարդապետ Աճեմյան: Հանդեսին բացումը կատարվեցավ «Տէ՛ր, կեցո՛ւ» մաղթերգով, որ երգվեցավ երգչախումբին կողմն, ղեկավարությամբ Դ. Ղազարոսյանի:

Խոսքեցան վարժարանի տնօրեն պարոն Պապիկյան, Հ. Գարայան, Բ. Կոստանյան,

Ե. Խաթանասյան և Հ. Նասիպյան: Եզրապատու թեմին առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս մեծարանքի խոսքեր ուղղեց ուսուցիչներուն: Խոսք առավ հյուրաբար հոն գտնվող բարձրապատիվ Տ. Նղիշ արքեպիսկոպոս Տերտերյան: Ուսուցիչներուն կողմն խոսք առավ տիկին Մաղկունի:

Վարժարանի մաղթերգեն ու «Հայր մեր»-ն ետք Պատրիարքական տեղապահ սրբազանի Եպիսկոպոսի ղեկավարությամբ հանդեսը:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1955 թ., փետրվար)

ՀՈԳԵՇՆՈՐԸ Տ. ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱՇՃԱՆԻ ՀԻՄՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Դեկտեմբերի 25-ին (1954) Բուենոս-Այրեսի մեջ տոնվեցավ հոբելյանը հոգեշնորհ Տ. Գուրգեն վարդապետ Թաշճյանի: Հոգեշնորհ հայր սուրբը շատ կանուխեն նվիրված է կրթական ասպարեզին և տարիներով ուսուցչական պաշտոն վարած Թյուրքիո ու Լիբանանի

մեջ: Ապա անցած է Արգենտին, ուր նույնպես բազմաթիվ աշակերտներ հասցուցած է:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1955 թ., փետրվար)

ԵՐԳԱՆԱՆ ՊԱՐՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ՊՈԼՍՈ ՄԵՋ

Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեմանքի երաժշտության ուսուցիչ և տաղանդավոր երգահան պարոն Համբարձում Պերպերյան վերջերս այցելած է Պոլիս, ուր տված է երաժշտական երեք համերգներ, որոնք մեծապես տպավորած են պոլսահայ հասարակությունը: Պոլսահայ մամուլը խանդավառ տողերով կնկարագրեց «Վարպետ»-ին այդ համերգները:

Առաջին համերգը տեղի ունեցած է դեկտեմբերի 18-ին (1954), կիրակի առավոտ, «Ատլաս» սրահին մեջ. ներկա գտնված են մոտ 1.200 հոգիներ:

Երկրորդ համերգը տեղի ունեցած է «Ինջի» սինեմայի մեջ, հունվար 11-ին (1955):

Հունվարի 16-ին պարոն Համբարձում Պերպերյան հանդես եկած է սրբազան երաժշտության նվիրված համերգով մը, Ս. Երրորդություն եկեղեցվում մեջ, բարձր նախագահության մամնապատիվ Պատրիարք հոր, եկեղեցական հայրերու և հինգ հազար հաշվող ունկնդիրներու:

(«ՀԱՍԿ», պաշտոնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1955 թ., մարտ)

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎԶՈՒԹՅՈՒՆ

Կիրակի, 26 դեկտեմբեր, աննախընթաց բազմություն մը լեցուցած էր Ս. Գրիգոր Լուսավորիչ հայր եկեղեցին, վերնատունն ու գավիթը, մինչ ուրիշներ՝ ձայնասփյուռի միջոցով, բակին կհետևեին արարողության: Բարեպաշտ հայ ժողովուրդը եկած էր ականատեսն ու վկան ըլլալու՝ հոգեշնորհ հայր Գուրգեն վարդապետ Թաշճյանի ծայրագույն վարդապետի տասը աստիճաններու տվություն:

Առավոտյան ժամերգությունն ետք, Պատվիրակ սրբազան հայրը եպիսկոպոսական տարագով զգեստավորված, քահանայից և դպրաց դասերու առաջնորդությամբ, «Հրաշափառ»-ով հանդիսավոր մուտք գործեց Տաճարեն ներս, որուն մուտքի դռան մոտ կրա-

պասեին հայր Գուրգեն և խարտավիլակ հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մուշյան, որ խնդրանք կամառուցանե սրբազան հոր՝ ծայրագույն վարդապետության աստիճանները շնորհելու:

Ութ աստիճանները հաջորդաբար կտրվին տաճարի մուտքին, կեդրոնին ու աջ և ձախ կողմերը: Սուրբ պատարագը սկսելն վերջ, ճաշու գրքի ընթերցման պահուն, 9-րդ աստիճանը դասին մեջ կտրվի, և հանդիսապետը ամբողջ շքախումբով կբարձրանա սուրբ խորան, ուր կուտայ ծայրագույնությունը լրացնող 10-րդ աստիճանը:

(Բուենոս-Այրես, «ՀԱՅ ԿԵՒՐՈՆ», 1955 թ., № 3—4)

ՍԱՐԿԱՎԱԳԻ ԶԵՆՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՆԻԱԳԱՐԱ ՖՈԼԶԻ ՄԵՋ

Օրիորդ Ալիս Մուրատյան, ժրջան քարտուղարուհին Նիազարա Ֆոլզի Ս. Սարգիս հայաստանյայց եկեղեցվում ծխական խորհուրդին, տեղական ձեռագարա Ֆոլզ գաղեստ թերթին երկուշաբթի, փետրվար 14, 1955-ին մեջ շատ գեղեցիկ կերպով նկարագրականը կուտա հանդիսավոր սուրբ պատարագին, տեղվույն երեսփոխան պարոն Գրիգոր Թա-

թոյանի սարկավագ ձեռնադրության և հաջորդող մեծ ճաշկերույթին: Պատշաճ նկարի մեջ կերևան առաջնորդ սրբազան հայրը, Տ. Խորեն քահանա Մամիկոնյան՝ տեղվույն հովիվը, ուրարակի տիրացուներ՝ Զորջ Գրիգորյան, Հովհաննես Գասպարյան և Վարդան Արթինյան, և Գրիգոր սարկավագ Թաթոյան: Բարեշնորհ Գրիգոր սարկավագ Թաթոյան, զավակը տեղվույն ծանոթ ազգայիններն

հանգուցյալ Սեդրակ Թաթոյանի և այրի տի-
կին Մարիի, չորս տարի իբր մասնավոր ու-
սանող հետևած է Անթիլիասի Դպրեվանքի
դասընթացքներուն: Անցյալ տարի վերադառ-
նալով Ամերիկա, կընտրվի Ս. Սարգիս եկե-
ղեցվո երեսփոխան, և փետրվար 13, 1955-ին,
ձեռամբ առաջնորդ սրբազան հոր, կըստանա
սարկավագի վեց աստիճանները:

Հոգեզմայլ արարողություններեն հետք, ու-
րոնք մեծ տպավորություն կ'ազդեն խոռոհերամ
հավատացյալներուն վրա, տեղի կունենա
չքեղ ճաշկերույթ մը 250 հոգիի մասնակցու-
թյամբ, եկեղեցվո սրահին մեջ: Սեղանապե-
տությունը կվարեն ծխական խորհուրդին փոխ-
ատենապետ պարոն Միքայել Գրիգորյան:
Գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան արքեպիս-

կոպոս վեր կառնե հայ մշակույթի փառավոր
անցյալը և մեր ներկա անելիքը: Սրբազան
հայրը կգնահատե Գրիգոր սարկավագին եկե-
ղեցասիրական ձգտումները: Խոսք կառնեն
նույնպես տեղւոյն հովիվը և պարոնայք՝
Գասպարյան, Հարությունյան, Սեմերճյան և
Պոյաճյան: Կներկայացվի կոկիկ գեղարվես-
տական մաս մը ևս: Հեռու քաղաքներեն կա-
րևոր թիվով հյուրեր ներկա եղան:

Շնորհավորություններ և հաջողության
մաղթանքներ բարեշնորհ Գրիգոր սարկավագ
Թաթոյանին:

(«Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ
ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ առաջ-
նորդաբանի հայոց Ամերիկայի,
1955 թ., մարտ)

